ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«15» 11 2018թ.
№ [illegible]/4540

«Դեագա» ՍՊԸ (ՀՎՀՀ 00442959) տնօրեն
Գ. Ղասաբողյանին
հասցե՝ ք. Երևան, Էրեբունի 34/62
էլ. հասցե՝ deaga2015@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «Դեագա» ՍՊԸ-ի միջև 20.09.2018թ. կնքված N ՀԲՄԱՊՁԲ-7/9-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2018թ. հոկտեմբեր ամսին Կոտայքի տարածաշրջանի զորամասեր պետք է մատակարարեր 53 543 կգ կարտոֆիլ, սակայն նոյեմբերի 11-ի դրությամբ մատակարարվել է 16 070 կգ կարտոֆիլ:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. նոյեմբերի 19-ին միակողմանի մասնակի լուծել է ՀԲՄԱՊՁԲ-7/9-3 պայմանագիրը հոկտեմբեր ամսվա ընթացքում մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված 37 473 կգ կարտոֆիլի խմբաքանակի մասով:

Տեղեկացնում եմ, որ «Դեագա» ՍՊԸ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 18 947 ՀՀ դրամը որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 451 200 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ը):

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

0044, Երևան, Բագրևանդի 5, Հեռ.՝ (+374 10) 29 45 45, Ֆաքս՝ (+371 10) 29 46 13, Էլ.փոստ՝ depart@mil.am
Ереван, Багреванда 5, 0044, Тел: (+374 10) 29 45 45, Факс. (+374 10) 29 46 13, Эл.почта: depart@mil.am
0044, 5 Bagrevans Str., Yerevan, Tel. (+374 10) 29 45 45, Fax: (+374 10) 29 46 13, E-mail: depart@mil.am